

4238

Կուրիան Վ. Վարդանեանի և Բ. Բարսեղեանի

Վ. ԳՈՒՄՊԼՈՎԻՉ

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆՆ

ՈՒ ԱԶԱՏ ՍԷՐԸ

Բովանդակություն

I. Սոցիալիզմը և ամուսնությունը. II. Ամուսնությունն սոցիալիզմի հետքերը. III. Կոլեկտիվիստական հասարակությունը. IV. Սերը կոլեկտիվիստական հասարակությունում. V. Բարենորոգիչ աշխատանքը:

Թարգմ. Վ. Վարդանեան

10 ԿՈՊ.

00

3K 9

9-96

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան «ԷՊՕԻՆԱ», Գանձակաջա № 3.

1908

3K9 uV 27 MAR 2013

9-96

300

1224-9-01

Վ. ԳՈՒՄԳԼՈՎԻԶ

02 JUL 2005

1 DEC 2009

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆՆ

ՈՒ

Ա. ԶԱՏ ՍԷՐԸ

1003
11626



Թարգմ. Վ. Վ.



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան «ԷՊՕԴՆԱ», Գանձակալա № 3.

1908

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՅԱՌԱՋԱԲԱՆԸ

Այս հրատարակութիւնը աշխարհ է գալիս հրկու նշանաւոր լրացումներով. առաջինն է իմ մտքերի ուրագիծը՝ «կոլլեկտիվիզմը, զիւղատնտեսութեան մեջ»: Այդ յաւելումը ոչ մի տեղ չէ ցոյց տալիս, որ իմ աշխարհայեցողութիւնը փոխուած է. այդտեղ արտայայտուած են նոյն հայեացքները, ինչ որ արդէն ունէի, երբ գրում էի այս գրքոյկը, բայց մասամբ ժամանակի և մասամբ էլ «Socialistische Monatshefte»-ի մէջ, տեղի սղութեան պատճառով, չէի կարողացել արծարծել ցանկալի չափերով: Երկրորդ լրացումը վերաբերում է, այսպէս կոչուած, « ի բնէ անառակ կանանց», և ուղղուած է մօդայի կարգ անցած գաղափարների շփոթութիւնների դէմ, որից ազատ չեն և սոցիալիստներից ոմանք:

Եթէ այս գրքոյկը կարդացուի և ընդօրինակողներ գտնէ, հասած կը լինի իր նպատակին:

Վլադիսլաւ Գումպլովիչ

«Wildhaus»,— St. Gallen-ի Կանտօն
1904 թ. յուլիսի վերջը:

ՍՈՑԻԱԼԻԶՄԸ ԵՒ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ

Սոցիալիզմը հանգիստ սրտով կարող է երկինքը զիջանել աստուածաբաններին, և «իրը իր մէջ» դատողութիւնները բնազանց փիլիսոփաներին. իսկ ինքը, եթէ կամենում է լինել ամբողջական, ուժեղ և հետեապէս անյողողող աշխարհայեցողութիւն, և տալ իր հետեւողներին մի շարք դէն շարժած սովորութիւնների փոխարէն մի աւելի արժէքաւոր բան, պարտաւոր է մարդկային իրական կեանքի ամեն հիմնական հարցերի վերաբերմամբ բոլորովին պարզ և որոշ դիրք բռնել: Դրա հետ միաժամանակ սոցիալիզմը պարտաւոր է քննել իր վերաբերմունքը դէպի նոր սիրոյ հարցը և այն փոփոխուող հասարակական ձեւերը, որոնց մէջ ծնունդ է առնում այդ հարցը: Մենք ի հարկէ չենք կարող բաւականանալ միմիայն կրկնելով այն ամեն բարին ու ազնիւը, որ այդ նիւթի մասին դարեւ շարունակ ասել են հին ու նոր սոցիալիստները— միմիայն կրկնելով ու նրանցով երդուելով:

Չէ, այդտեղ էլ հոգեկան ժառանգութիւնը պէտք է վերաքննել: Վերջին խօսքերս յաւակնութիւն չունին ուրիշ բանի, բացի վերաքննութեան խթան լինելուց:

Այն հասարակութիւնը, որի մէջ մենք խրուել ենք և որից աշխատում ենք ազատուել, իբրև սեռական յարաբերութեան միակ, պաշտօնապէս ճանաչուած ձև ընդունում է ամուսնութիւնը, լինի նա կատարուած, անխտիր, կաթոլիկ, լուտերական կամ հրէական եկեղեցիների ծիսակատարութեամբ, թէ քաղաքական, — միևնոյն է, միայն թէ անպայման լինի միակին և անլուծելի:

Մինչև հիմա էլ ապահարգանք ու նրան հետևող նոր ամուս-

նութիւնը ճանաչուած է իբրեւ անթոյյատրելի և կամ, եթէ երբեմն էլ հաշուում են իբրեւ մի անխուսափելի չարիքի հետ, այնուամենայնիւ միշտ աշխատում են նրա առաջ խոչընդոտներ յարուցանել, ամեն տեսակ, նոյնիսկ ամենախիստ միջոցներով: Մենք զգում ենք, որ այդ դէպքում հնացած բարոյագիտութիւնն ու օրէնքները հիմնապէս քանդում են մարդկանց բազմաւորութիւնը: Բայց մեր ժամանակակից արդարասիրութեան զգացումը ամենաինչէ բողոքում և շատ յաճախ այդ բարոյագիտութիւնն ու նոյն օրէնքները պատճառ են դառնում ծանր ու աւելորդ տանջանքների: Մենք՝ ամենքս՝ մեզ մեղաւոր ենք զգում, որ գոյութիւն ունի այդ անարդարութիւնը, քանի որ կարող էինք վերջ տալ նրան, բայց չենք անում:

Ինչպէս կախարդներին դատելը շարունակուած էր նոյնիսկ այն ժամանակ, երբ հասարակութիւնը արդէն գիտակցել էր, որ այդ գործողութեան շնորհիւ տանջւում ու կեանքից զրկւում են բոլորովին անմեղ մարդիկ, այնպէս էլ այժմ անտարբերութեան, վախկոտութեան ու խոր ագիտութեան շնորհիւ շարունակւում է իր գոյութիւնը պահպանել այդ անմիտ բարբարոսութիւնը:

Բայց եթէ կայ մի բան, որ արգելք է հանդիսանում աւելի բարձր հայեացքների ասարածման ու դժուարացնում է կուրը այդ բարբարոսութեան դէմ, դա այն իրողութիւնն է, որ հնաւանդ ամուսնութիւնը ունի իր երկու բոլորովին տարբեր հիմքերը. և այդ պարզ ըմբռնում են շատ քիչերը միայն: Աւանդական պսակը պատասխանում է երկու, բոլորովին տարբեր, հարցերի: Մի հարցն այս է. «Ո՞ր դէպքում տղամարդի և կնոջ սեռական յարաբերութիւնը կը լինի բարոյական»: Ամուսնութեան կողմնակիցները այդ հարցին պատասխանում են. «Եթէ տղամարդն ու կինը ունին ամուսնութեան վկայագիր, նրանց սէրը բարոյական է, եթէ չունին՝ նրանց սէրը մեղաւորից ու ամօթաբեր է»:

Մենք՝ սոցիալիստներս՝ լինչ գործ ունենք այս վայրենի նախապաշարութիւնների հետ: Ի հարկէ ոչ մի: Մեզ համար պսակի վկայականը մի ֆէտիշ, կուռք է, որին երկրպագում են վայրենիները, և ուրիշ ոչինչ: Նրա գոյութիւնը չի կարող մաքրել ծախու անառակութիւնը, իսկ նրա բացակայութիւնը նմանապէս չի կարող արատաւորել փոխադարձ սիրոյ մաքուր կրակը: Եթէ ամուսնութիւնը ունենար միայն այս կողմը, մենք, առանց երկար

մտածելու, կը համոզուէինք, որ իզուր ենք զնահատում և այդպէս ամուր կաշում նրանից:

Բայց կայ և՛ մի ուրիշ հարց. «Ո՞ւմ վրայ է ընկնում մօրը և երեխային հասարակական ու նիւթական օժանդակութիւն ցոյց տալու պարտականութիւնը». — «Ամուսնու վրայ», պատասխանում են ամուսնութեան կողմնակիցները:

Թէպէտև այս պատասխանը հեռու է իրէալական լինելուց, բայց այնուամենայնիւ պատասխան է: Մեծ մասամբ հայրն է, որ բաւարար չափով կատարում է մօրը և երեխային պաշտպանելու պարտականութիւնը, և այդպիսով կարելի է դարձնում մարդկութեան յետագայ աճումը: Տղամարդը այդ հարցը նոյնքան լաւ է լուծում, որքան որձ-շիմպանզէն, որ ողջ գիշերը չի քնում ու պահպանում է արիւնհարբու յովազի յարձակումներից իր էգին ու երեխաներին, որոնք քնած են լինում ծառի ճիւղերի ու կանաչ տերեւներով պատրաստած անկողնի վրայ: Կազմուածքով թոյլ, բայց ցեղի շարունակութեան համար անհրաժեշտ արարածներից այդ պաշտպանութիւնը գոյութիւն ունի անյիշատակ ժամանակներից ի վեր: Ոչնչացնել այդ՝ առանց տեղը մի բան զննելու՝ յղի կնոջը, ծննդկանին կամ ծնկեր երեխայի անօգնական մօրը ենթարկել գոյութեան կուր սարսափներին՝ կը նշանակէ մի քայլ յետ գնալ ոչ միայն ժամանակակից քաղաքակրթութիւնից, այլ նոյնիսկ Աֆրիկայի սևամորթ վայրերի ցեղերից. դեռ էլի աւելին ասեմ՝ դա յետադիմութիւն կը լինէր նոյնիսկ գոռիլայի ու շիմպանզէի վերաբերմամբ:

Ահա սոցիալիզմը կանգնած է այս տեսակ հարցի սուղ-սէրը լուսաւորել բարձրագոյն բարոյականի լոյսով և միաժամանակ երեխայի ու մօր պաշտպանութեան նախկին սխտեմը փոխարինել նոյնքան, կամ աւելի գործնական, մի ուրիշ սխտեմով:

II

ԱՄՈՒՍԵՆՈՒԹԵԱՆ ՍՈՑԻԱԼԻԶԱՑԻԱՅԻ ՀԵՏՔԵՐԸ

Ժամանակակից հասարակութիւնը, որ իր խաւերում կրում է ապագայի անքան սաղմեր, ռենի արդեօք իր մէջ այդ նոր, լաւագոյն սիստեմի տարրերը, սիստեմ՝ որը աւելորդ պիտի դարձնէ տղամարդի, իբրեւ իր կնոջ ու իր երեխայի պատենտաւոր պահապանի ու պաշտպանի դերը և մեր կանանց և մեր երեխաների վրայ հոգ տանելու գործը պիտի յանձնէ հասարակութեան խնամքին:

—Այո:

Ինքն ըստ ինքեան պարզ է, որ այդ սաղմերը աւելի հեշտ է գտնել այն տեղերում, որտեղ նախկին սիստեմը երևան է հանում ամենաշատ աչքի բնկնող թերիներ և ազդակող պակասութիւններ: Նախ և առաջ պսակը պաշտպանում է միայն օրինակաւ կնոջն ու օրինակաւ երեխային. ոչ ոք պարտական չէ հոգալու այն երեխայի մասին, որի հայրը անյայտ է: Ապօրինի հայրը, եթէ մինչև անգամ հարուստ էլ լինի, իր ապօրինի զաւակի վրայ տարած խնամքը կարող է սահմանափակել ողորմութեան նման մի չնչին օժանդակութեամբ: Այդ դէպքում բարեպաշտ մարդիկ հակուած են չճանաչել նոյնիսկ այդ «մեղքի պտուղի» գոյութեան իրաւունքը, որ այդպէս, առանց հարցնելու, յետին դռներով աշխարհ է սկիւռել: Բարեպաշտ կաթողիկոսների, լուտերականների ու հրէաների կարծիքով՝ յղի կինը, երբ պսակի վկայական չունի, ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի անարգ ոճրագործ, և չկայ այնպիսի հայհոյանք, որ խիստ ու չափազանց համարուէր «այդ անպիտան կնոջ» դէմ, «արդար» ցասման ժամանակ:

Որքան մեր կրօնական դէպքմունքի կենտրոնը աստուածնութիւն, հրեշտակներ, սրբերի, սատանաների ու միւս ոգիների շըր-

ջանից անցնում է դէպի ողնաւոր կենդանիների ու մարդու կենսաբանութիւնը (biologia), այնքան աւելի մեծ նողկանքով պարտաւորում ենք դէն շարտել այն խելագար կարծիքը՝ թէ առողջ երեխան զուրկ է ապրելու իրաւունքից, որովհետեւ չունի այդ թղթէ կուռքը: Իւրաքանչիւր յղի կին ունի՝ արդեօք պսակի վկայական թէ չունի, մեղ համար պիտի լինի իբրեւ մի սրբազան, պողարերող ծիւ, հաստատուած մարդկութեան յաւիտենապէս կանաչ ծառի վրայ: Թէև կը գտնուեն մարդիկ, որ այս տողերը կարգաւորվ գլուխները կը թափահարեն, բայց պիտի գիտենաք, որ մարդկութիւնը վաղուց է ընտելացել այնպիսի հասարակական հաստատութիւնների, որոնք, թէև մասամբ, բայց հաստատում են այստեղ արտայայտուած այդ հայեացքը: Շատ տեղերում ունինք ծննդաբերութեան տներ, մանկանց ապաստարաններ և այլն, որոնք իրենց դռները բաց են անում նոյնպէս և ապօրինի մայրերի և զաւակների առջև: Այդ հաստատութիւնները դեռ փոքր թիւ են, և որակութեան կողմից էլ շատ յետ են մնացել, բայց և այնպէս հանդիսանում են իբրեւ ապագայ հաստատութիւնների փոքրանկարը. դրանք, այսպէս ասած՝ զարգացնում են այն տեխնիկան, որ ապագայում պիտի կատարելագործուի և կիրարկուի աւելի լայն չափերով: Եւ քանի այդ հաստատութիւնների հրսկողութիւնը քահանաների ու կոյսերի ձեռքից հեռացնուէ անցնում է աշխարհական գիտութիւններով զինուած բժիշկների ու մանկաբարձուհիների ձեռքը, այնքան աւելի օրինական և ապօրինի հիւանդների վրայ տարուած խնամքը դառնում է միակերպ: Մենք ունինք բանւորական օրէնսդրութիւն, որով յղի կանանց և ծննդաբանների համար ապահովում է յարմարութիւնների ու նիւթական օժանդակութեան ամենապակաս չափը: Ի պատիւ մեր ժամանակի պիտի ասել, որ օրինաւոր և ապօրինի զաւակների իրաւունքները հաւասարացնելու հարցը շատ անգամ է բարձրացել: Այժմ արդէն այդ հարցը անկարելի է խեղդել:

Ժողովրդի լայն խաւերի անտեսական աւելի ու աւելի ստրկացումը հետզհետէ ստեղծում է այնպիսի հանգամանքներ, որ օրինաւոր ամուսիններն էլ չեն կարողանում պատշաճաւոր չափով հոգ տանել իրենց զաւակների վրայ: Իսկ ինչ վերաբերում է այդ չարիքի առաջն առնելու հարցին, որեւէ նոր սկզբունք մշակել ու կեանքի մէջ մտցնել՝ աւելորդ է. բաւական է գոյութիւն ունեցող

ստիճանները դարձա՞ցնել ու ընդարձակել: Այսպէս, օրինակ, քաղաքներում սովորաբար կան լաւ հասարակական դպրոցներ, գիւղերում՝ ժողովրդական դպրոցներ, թէպէտև ոչ այնքան գոհացուցիչ: Աղքատ աշակերտներին և բարձր դպրոցների ուսանողներին տրուող թոշակը հանդիսանում է այն սկզբունքի մասնաւոր խոստովանութիւնը, թէ մասնագիտական բարձրագոյն դպրոցներն ընդունելու համար վճռական նշանակութիւն պիտի ունենայ ոչ թէ ուսանողի նիւթական կարողութիւնը, այլ նրա ընդունակութիւնը:

Շվէյցարիայում ձրի ուսումը արդէն զգալի չափեր է ընդունել. օրինակ, Յիւրիխում բարձրագոյն կրթութիւնը ձրի է. ուսման պիտոյքները տրուում են նմանապէս ձրի: Ֆրանսիայում, այն քաղաքային համայնքներում, ուր գերակշռող դեր են խաղում սոցիալիստները, հերթական է դարձել աշակերտների ձրի ապրուստի հարցը: Սրանից յետոյ մնում է միայն անել մի քայլ, որպէս զի տեսականապէս ընդունենք երեխաներին հասարակաց հաշուով կրթելու և սնուցանելու սկզբունքը: Գործնականից ի հարկէ շատ հեռու ենք: Սրանց հետ միասին ազդում են և ուրիշ գործօններ, որոնք մեղմում են չարիքի չափերը. — դա բանւոր-կանանց թուր շարունակ աճն է: Անմտութիւն կը լինէր կանանց՝ արդիւնաբերական գործարաններում ընդունելու խրաքանչիւր դէպքը առաջադիմութիւն համարել. ընդհակառակը, շատ յաճախ, դա պատճառ է լինում կանանց ստրկացման: Արդիւնաբերական աշխատանքը նրանց առողջութեան վրայ քայքայիչ ազդեցութիւն է գործում, որի հետեանքը յաճախ լինում է վիժումների ու անկանոն ծնունդների համաճարակը: Երկար ու ծանր աշխատանքի համար այնքան չնչին վարձատրութիւն է տրուում, որ կիւր ստիպուած է լինում պակասը պոռնկութեամբ «լրացնել»: Նա իջեցնում է ամուսնու գործավարձը, երեխան էլ իր հերթին ծնողների գործավարձը և վերջի վերջոյ ամբողջ ընտանիքը սկսում է շահել աւելի քիչ, քան առաջ ստանում էր ընտանիքի գլուխը՝ հայրը, այն տարբերութեամբ միայն, որ առաջ տնտեսութիւնը աւելի կանոնաւոր էր գնում, իսկ այժմ բոլորովին ընկել է, երեխաները կոպտացել ու անխնամ են թողնուել: Բոլոր այս դէպքերում կնոջ արդիւնաբերական աշխատանքը նրան չէ փրկում. ամուսնուց կախումն ունենալու փոխարէն նա դառնում է կապիտալի ստրուկը:

Կինը ինքը կազատուի տնտեսական ճիրաններից, ուր նրան

մղել է դառն կտրիքը, կազատուի՝ հէնց որ կը պակասի տնտեսական ճնշումը ու երևան կը գայ համապատասխան աշխատանքը: Եթէ աշխատանքի առողջապահական պայմանները քիչ թէ շատ տանելի լինեն և վարձատրութիւնը բաւարար, այն ժամանակ կնոջ ինքնուրոյն աշխատանքը նրան միջոց կը տայ աւելի անկախ և ազատ լինելու, քան ներկայ մոմէնտում: Իմ ասածը հնարաւոր է. չէ՞ որ մարդը մեքենայ չէ. մարդն ու կինը չեն կարող կէտ առ կէտ, կարծես մի ընդհանուր կաղապարով, անմիջապէս փոխել իրենց զգացումներն ու զգայնութիւնը, նայելով, թէ ինչ փոփոխութիւն է տեղի ունենում նրանց կեանքի պայմաններում. միակընտեսութեան հոգեբանութիւնը կարող է աւելի երկար ապրել, քան նրա տնտեսական հիմքը: Միւս կողմից, չպիտի մոռանալ, որ ներկայ ժամանակ կինը մեծ մասամբ ծառայում է ոչ թէ ուսման, բարձր համայնքի մէջ, այլ մասնաւոր «սեփականատիրոջ», որ բացարձակ ու միապետական իրաւունքներ է վայելում: Արդիւնաբերողն ու նրա ստորագրեալները կարող են զգալիօրէն կըրձատել բանւոր կնոջ սեռական ազատութիւնն ու անկախութիւնը. թէ ինչ չափով՝ պարզուեց գործատէրերի վերաբերուիլ յօդուածների մասին տեղի ունեցած վիճաբանութիւնների ժամանակ: Որևէ է կրիտասարդ կին, որ իր ամբողջ կեանքը մի երդումով կապել է իր ամուսնու հետ, անհամեմատ աւելի ազատ է, քան այն գործակատար կանայք, որոնք, սպառնալիքներից դրդուած, ստիպւում են կապակցութիւն ունենալ իրանց անգուրեման իշխանաւորի հետ:

Մի կողմ թողնելով իշխանութեան զեղծումի այս դէպքերը, տեսնում ենք, որ ազատ սիրոյ նիւթականապէս իրականացումը առաջ է դալիս, հէնց որ կինը՝ իր աշխատանքի շնորհիւ՝ դառնում է տղամարդուց անկախ: Թէպէտև կնոջը յատուկ անօգնականութիւնը բոլորովին չի ջնջւում, բայց զգալիօրէն պակասում է. կնոջ ամուսնուց ունեցած մշտական կախումի փոխարէն, նա ունենում է ժամանակաւոր կախումն, կեանքի այն շրջաններում, երբ ընտելութիւնը դնում է կնոջ վրայ «ծանր լուծ»:

Այս ամենի շնորհիւ նշանաւոր չափերով թեթեւանում է կուլեկտիվիստական հասարակութեան գործը. այն է՝ ապահովել կնոջ և երեխայի համար նոյն պաշտպանութիւնը, ինչ որ առաջ ապահովում էր ամուսին-հայրը:

Այսպիսով արդէն գոյութիւն ունեցող զարգացման առաջ-
խաղացութիւնը կրկնակի ճանապարհով տանում է դէպի վերո-
յիշեալ նպատակի իրադրոժումը: Որքան աւելանում է հասարա-
կութեան խնամքը դէպի մայրն ու երեխան, նոյնքան բազմանում
են կնոջ աշխատանքի ճանապարհները, արդիւնաբերութեան ձեւեր-
րում, և այնքան հետզհետէ աւելորդ է դառնում ամուսնութիւնը
կնոջ համար:

Եւ հէնց գլխաւորն էլ այդ է. չէ՞ որ մինչև այժմ ամուսնու-
թիւնը անհրաժեշտ էր միայն կնոջ համար: Եթէ տղամարդն
ասում է, որ ինքը հեշտութեամբ կարող է խուսափել ամուսնու-
թիւնից, այդ նոյնքան համոզիչ է, որքան գործարանատիրոջ յայ-
տարարութիւնը, թէ իրեն հարկաւոր չէ բանւորների պետական
պաշտպանութիւնը: Միայն այն ժամանակ ամուսնութիւնը կը դառ-
նայ մի հնացած հաստատութիւն, և ազատ սէրը կը լինի սեռա-
կան յարաբերութիւնների բնական ձևը, երբ կինը կատարեալ իրա-
ւունքով կը կարողանայ յայտարարել՝ «Ես չեմ ճանաչում
ամուսնութիւնը, որովհետև հասարակութիւնը ինձ և իմ որդիներ-
ըի համար արդէն ապահովել է այն պաշտպանութիւնը, որը պէտք
էր մեզ»:



III

ԿՈՂԼԵԿՏԻՎԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Յետագայ բացատրութիւնների համար օգտակար կը լինի
ցոյց տալ, թէ ի՞նչ ձև պիտի ստանայ ազատ սէրը, կազմակերպուած
կոլլեկտիվիստական հասարակութեան մէջ: Բայց նախ քան այդ,
անհրաժեշտ է նկարել կոլլեկտիվիստական հասարակութեան
պատկերը կամ տալ գոնէ նրա փոքրիկ ուրուագիծը:

Նախօրօք յայտնում եմ, որ ես մի կողմն եմ թողնում այն
հարցը, թէ ե՞րբ պիտի իրականանայ կոլլեկտիվիստական դրու-
թիւնը—արդեօք 30, 60 կամ թէ 90 տարուց յետոյ յանկար-
ծակի, մի հարուածով ամբողջ աշխարհում, թէ՞ նախ կը
սկսուի Նոր-Ջեւանդիայից և ապա կանցնի Աւստրալիա: Նոյնպէս
չեմ կարող քննել այն հարցը, թէ կոլլեկտիվիստական հասարակու-
թեան մէջ կը պահպանուի՞ն արդեօք նախորդ շրջանի մնացորդ-
ները, նոյնիսկ սոցիալիստական կերպարանքի տակ թաքնուած,
թէ ոչ: Գլխաւորն այն է, որ կարողանանք պարզ պատկերացնել
այն տեսարանը, որը կարող էր մեզ օժանդակել ժամանակակից
կեանքի զարգացման բազմաթիւ տարրեր տեսնեցնելուներից
որոշելու այն հիմնական տեսնեցնելու, որի վրայ պիտի յենուենք
և հասնենք նրա տրամաբանական հետեւանքներին: Կարճ ասած,
պիտի գտնել մեզ զբաղեցնող խնդրի շօշափելի ձևակերպումը:

Ապագայի հեռանկարը տալու ժամանակ դժուար թէ կարո-
ղանայինք խուսափել անհատական որոշ զգացումներից, եթէ ի
հարկէ չբաւականանք ընդհանուր կէտերով: Կաշխատեմ կարելիին
չափ անաչառ և օրեկալ լինել:

Ենթադրենք, որ արդիւնաբերական գործիքները, ինչ տե-
սակ էլ լինեն, անցել են հասարակական խմբերի ձեռքը, և այդ
խմբերը որոշ չափով իրաւունք ունեն ընկերութիւններ կազմելու:

Այդպիսի խուճը կարող են կազմել նախ տերիտորիալ, համերկ-
րային միութիւնները, համայնքները, գաւառները, կառավարու-
թիւնը և վերջապէս միջազգային զաշնակցութիւնները, այ-
նուհետեւ—սպառողական, իսկ որոշ պայմաններում էլ, մինչև ան-
գամ, արհեստակցական և արդիւնաբերական բնոյթ կրող միու-
թիւնները: Այս խմբերի ընդհանուր յատկանիշն այն է, որ նրանք
շարունակ բաց են բոլորի առաջ, այսինքն նրանց անդամների
թիւը չի կարելի ըստ կամաց սահմանափակել: Ուրեմն դրանք ոչ
բուրժուական ընկերութիւններ են և ոչ էլ պատրիկների ազ-
նուապետական կազմակերպութիւն, որ նորեկների մի կարգ սե-
րունդները զրկեն ձայնի իրաւունքից, — ընդհակառակը, ազատ դե-
մոկրատական հաստատութիւններ են, որոնց մէջ իւրաքանչիւր նո-
րամուտ, մի քանի ամսից յետոյ դառնում է հաւասար իրաւունք-
ներ վայելող բաղադրացի: Այդ խմբերը նման չեն լինելու ակցիո-
ներական սպառողական ընկերութիւններին, որոնք շահագործում են
գնորդների լայն մասսաները, այլ ընդհակառակը, կը լինեն ամենքի
և իւրաքանչիւրի համար մատչելի: Կարող են ընդունել և ար-
հեստակցական միութիւնների կերպարանք միայն այն պայմանով,
որ իւրաքանչիւր նախապատրաստուած բանւոր ազատ մտաք-
ունենայ նրանց մէջ:

Շնորհիւ այս ընկերութիւնների իրաւական կազմին՝ անկարե-
ւի կը լինի գործը որոշ թւով անձանց մէջ սահմանափակել և ըս-
տեղծել մենաշնորհուածների մի խումբ, չնայած որ նա տիրապե-
տում է արդիւնաբերական գործիքներին և աշխատեցնում է բան-
ւորներ:

Միևնոյն ժամանակ միութիւնները որոշ իշխանութիւն կու-
նենան իրենցից աւելի մանր սեկցիաների վրայ: Այսպէս, օրինակ,
կառավարութիւնը, ծայրայեղ դէպքերում, իրաւունք կունենայ,
նոյնիսկ համայնքի կամքի հակառակ, յետ խլել կոմմունիստական
հողի այս կամ այն բաժինը, եթէ այդ անհրաժեշտ լինի ընդհա-
նուր կուլտուրական նպատակների համար: Միևնոյն ժամանակ
այդ նոյն իշխանութիւնը կապահովէ այս կամ այն հարուստ կամ
աղքատ համայնքը անհամաձայնութիւններ ծագելու դէպքում:

Կոլլեկտիվիստական հասարակութեան մանուկները կը կըր-
թուեն հասարակաց հաշուով յաճախելով ժողովրդական դպրոց-
ները. իսկ յետագայ կրթութիւնը, համաձայն իրանց հակումների

և ընդունակութիւնների ձեռք կը բերեն զանազան մասնադիտա-
կան ուսումնարաններում: Հասկանալի է, որ դաստիարակութիւնը
պէտք է ձգտէ, որպէսզի իւրաքանչիւր աշակերտ, գոնէ իր մաս-
նագիտութեան սահմաններում, լինի դա ատաղձագործութիւն,
բժշկութիւն, դրամատիկական արուեստ թէ քարտաշութիւն՝ ձեռք
բերի տեխնիքական և տեսական, թէօրեափքական ընդարձակ
պատրաստութիւն: Այն ժամանակ այլևս գոյութիւն չի ունե-
նայ տգէտ բանւորների դասակարգ և կը վերանայ կամ թէ
կը պակասի «թէօրետիկներին» «պրակտիկներին» բաժանող ան-
դունդը: Իրանց ուսումը աւարտելով, ջանքները, թէ աղջիկ և
թէ տղայ, կը դառնան բանւոր, և պաշտօնեաների, ուսուցիչների,
գիտնականների, նկարիչների և կամ արդիւնաբերական և գիւ-
ղատնտեսական հաստատութիւնների մէջ տեղեր կը բռնեն: (Մենք
այստեղ բանւոր խօսքը ի հարկէ գործ դրինք իր ամենալայն
իմաստով, որը կարելի է տալ ամեն անհատի, ով աշխատում
է յօգուտ հասարակութեան): Աշխատավարձի առաւելագոյն և նուա-
զագոյն չափերը որոշում են ընդհանուր կանոնադրութեամբ, իսկ
այդ սահմաններում զանազան կարգի բանւորներ վարձատրում
են մի կողմից ընկերակցութիւնների կազմակերպուած պահանջի,
իսկ միւս կողմից բանւորական բուրսայի և ընկերութիւնների, նմա-
նապէս կազմակերպուած, առաջարկութեան՝ փոխադարձ համա-
ձայնութեամբ: Վերջապէս աշխատավարձի վրայ վճռականապէս
կազդէ և իւրաքանչիւր բանւորի ընդունակութեան աստիճանը:

Արդիւնաբերական որոշ ճիւղեր, նայած իրանց յատուկ բնա-
ւորութեան, կարող են յատկացուել բացառապէս տղամարդկանց,
իսկ միւսները կանանց. բայց գլխաւորապէս տղամարդիկ ու կա-
նայք միասին կաշխատեն, և եթէ կատարած գործը հաւասար ար-
դիւնք է տալիս, կը ստանան միևնոյն վարձատրութիւնը:

Իւրաքանչիւր պաշտօն քիչ ու շատ յարատե կը լինի, և
շնորհիւ արդիւնաբերական հաստատութիւնների կանոնաւոր և
յաջողակ կազմակերպութեան խմբական արտաքսոմները անկա-
րելի կը դառնան: Կազմակերպուած ընկերութիւնների իրաւական
ընդարձակ լիազօրութիւնները ամենալաւ առհաւատչեան կը լի-
նեն, որ երբեք տեղի չեն ունենայ կամայականութիւններ: Ով իր
ստանձնած տեղի համեմատ պատրաստութիւն չի ցոյց տայ,
ճանապարհ կը դրուի, և այդպիսի դէպքերում օգնութեան կը գայ

խիստ կենտրոնացած, բայց կոլեկտիվիզմի շնորհիւ չափազանց պարզ մի հաստատութիւն, որ և միշտ պատրաստ կը լինի գործազուրկներին ծառայելու: Արտաքսուած բանւորը գեռես տեղից չհեռացած նոր տեղ կունենայ: Եթէ այդ չյաջողուի, նա մի քանի ամիս շարունակ կարող է թողակ ստանալ իր նախկին ծառայած ընկերութեան՝ անգործներին յատկացրած գումարից, կամ այն ընկերութիւնից, որին անդամ է: Բանւորական շուկայում մեր ժամանակի մտքով անգործներ երբեք չեն լինի, այսինքն այնպիսի մարդիկ, որ չունին ոչ մի հասոյթ և տեղ են որոնում: Իր կամքով տեղից հրաժարուող բանւորը միշտ միջոց կունենայ նոր տեղ գտնելու: Այդպիսով այլևս անվտանգ կը լինեն աշխատավարձը իջեցնելու փորձերը:

Իւրաքանչիւր ընկերակցութիւն, ի նկատի ունենալով հասարակութեան շահերը, կարող է օգտուել իր իրաւունքներից ամենալայն չափերով, հեռացնել իրանց մասնագիտութեան մէջ անպատրաստ բանւորներին, որոնք համազգային և միջազգային շուկաներում ընդունակ ու պիտանի բանւորներ, բարձրացնելով նրանց աշխատավարձը:

Բանւորների այս շարունակական փոխանակութիւնը կունենայ այն հետեանքը, որ ամեն մէկը կը կարողանայ որոշել իր իսկական կոչումը. մարդն ու աշխատանքը կը կազմեն մի ներդաշնակ ամբողջութիւն: Սոցիալական գտումը, ազատուելով ծագման ու կապիտալի արտօնութիւնների ֆրասակար ազդեցութիւններից, կը հասնի իր զարգացման վերին աստիճանին ու կը ծառայէ հասարակութեան օգտին ու բարօրութեանը:

Պիտի նկատել, որ սոցիալական գտումը թէ իր էութեամբ և թէ իր հետեանքներով խիստ տարբերում է Դարվինի «բնական ընտրութիւնից», որի համաձայն աւելի լաւ յարմարուողները աւելի կենսունակ են լինում. իսկ վատ յարմարուածները մատնւում են վաղաժամ ու անհետ մահուան: Սոցիալական գտումը կարող է ազատ արտայայտուել արդիւնաբերական միայն այն ճիւղերում, որոնց բնաւորութիւնը թոյլատրում է բանւորների յաճախակի փոփոխութիւն: Հակառակ դէպքում բանւորը ընկերութեան հետ կունենայ ոչ թէ վարձկանի՝ ինչպիսին վերեւ նկարագրուեց, այլ կապալառուի յարաբերութիւն: Այդ վերջին տեսակի յարաբերու-

թիւնը տիրապետող կը լինի գիւղատնտեսութեան մէջ, շնորհիւ այն սերտ կապի, որ մէկի գիւղացին իր մշակելի հողի հետ: Կապալը պիտի լինի երկարատեւ և կապալառուն պիտի ապահովուած լինի կամայական հրաժարումներից, հակառակ դէպքում նա էլ լինէ յոյսով ծառեր տնկէ, նրանց վրայ հող տանէ, ջրէ. չէ որ նրանք պտուղ և ստուեր պիտի տան երկար տարիներից յետոյ միայն: Այո, հող բաժանող ընկերակցութիւնը պէտք է, մեռնող, կամ կապալի ժամանակը լրակիրակցութիւնը պէտք է, մեռնող, կամ կապալի ժամանակը լրացնող կապալառուին իրաւունք տայ մասնացոյց անել իր յաջորդը և միայն վերջինի ակներև անընդունակ լինելու դէպքում հրաժարեցնէ կապալի «ժառանգութիւնից»: Բոլոր այս մանր զիպուածները, առաջ են եկել գիւղատնտեսութեան առանձնայատուկ բնաւորութեան պատճառով և ամենեւին չեն հակասում կոլեկտիվիզմի սկզբունքներին, որովհետև հողատիրութիւնը, հետեապէս, թէ կապալավճարի ժողովումը և թէ կապալով տրուած հողերի վրայ հսկողութիւնը ընկած է ոչ թէ մասնաւոր սեփականատիրոջ, այլ հասարակութեան վրայ, ճիշտ այնպէս, ինչպէս բոլոր բանւորները իրանց վարձն ստանում են ոչ թէ մասնաւոր անհատից, այլ հասարակութեան վրայ, ճիշտ այնպէս, ինչպէս մշակուի ինչպէս հարկն է, նախ և առաջ պէտք է կապալառու հողագործին տալ բաւական ժամանակ, որ նա կարողանայ մտերմանալ, ծանօթանալ, կապալով վերցրած հողի հետ: Հողագործութեան մէջ բանւորի անձեւորութեան և նրա գործունէութեան շրջանում կարելի է հասնել ամենամեծ ներդաշնակութեան ոչ այնքան ցնտրողութեամբ, որքան յարմարուելու շնորհիւ: Լինի հողագործութիւն թէ արդիւնագործութիւն, կապալավճար թէ աշխատավարձ — իւրաքանչիւր չափահաս աշխատասէր բանւորի վարձատրութեան չափը կախուած կը լինի միայն նրա աշխատանքի տուած արդիւնքից:

Ձրի բժշկութիւնը, հիւանդների խնամումը, կաղերի ու ծերերի հոգատարութիւնը, այդ ամենը հանդիսանում են ինքն ըստ ինքեան հասկանալի և նկարագրած սիստեմի համար լրացուցիչ հանգամանքներ: Ձրի ապաստարանների ու ծննդականներին խնամելու մասին վերը արդէն խօսեցինք:

Ի նկատի ունենալով այն նպատակը, որ այս գրքում առաջադրել եմ, բոլորովին աւելորդ եմ համարում խօսել այն

1003
17626



հարցի մասին, թէ լինչպէս է կատարուում արդիւնքների բաշխումը կողմնակալութեան հասարակութեան մէջ: Այդ բաշխումը կարող է չափազանց զանազան լինել. իսկ ինչ վերաբերում է նրա արտաքին ձևերին, հակառակ ոմանց կարծիքի, այնքան էլ չի տարբերուի ներկայ ձևերից:

Այն ժամանակ էլ ճաշարաններին պիտի կանխիկ փող վճարել. խանութպանները պիտի ստանան ծախած ապրանքի արժէքը: Տարբերութիւնը աւելի խորը կը լինի: Կերակուրի, խմիչքների հայթայթումն ու ապրանքների վաճառումը ոչ թէ մասնաւոր անհատների ու մասնաւոր առևտրական ֆիրմաների ձեռքին կը լինի, այլ կը կատարուի հասարակութեան և հասարակական ընկերակցութիւնների ձեռքով:

Փողը՝ լինի նա թղթադրամ թէ մետաղէ դրամ, առանձին շահեցողների սեպհականութիւնը չի կազմի, այլ կը դառնայ միայն բանւորի աշխատավարձ և միայն բանւորը կարող է տիրանալ նրան: Ծերերին, կազերին ու անգործներին յատկացրած դումարը նոյնպէս աշխատավարձ կը լինի միայն մի քիչ ձևափոխուած:

Հարց է ծագում, թէ այդ կարգի մէջ լինչ պիտի անէ աշխատաւոր-կինը, երբ իրան յղի զգայ: Արդեօք երեխայի հօրից օգնութիւն կը խնդրէ. դա իզուր կը լինի, որովհետև հօր աշխատանքը կը բաւականանայ միմիայն իրան: Նամանաւանդ, դա բոլորովին աւելորդ է, որովհետև հասարակութիւնը պատրաստ է նրան ծառայելու. հասարակութիւնը կը տայ նրան ամեն անհրաժեշտ պիտոյքը: Կը տայ ոչ այն պատճառով, որ այդ աղջիկը այս ինչ քաղաքացու կինը կամ սիրելին է, այլ որովհետև իբրև աշխատաւոր կին, ունի այդ իրաւունքը: Յղութեան պատճառով աշխատանքը կը թեթեանայ, իսկ յետոյ բոլորովին կընդհատուի: Երբ ժամանակը գայ, նա կը գնայ ծննդաբան և ծնելուց յետոյ էլ մի քանի ժամանակ կը մնայ այնտեղ, շրջապատուած խելացի ու ուշադիր խնամքով: Առողջանալուց յետոյ, նա հետեզհետէ կընտելանայ իր աշխատանքին, մինչև որ ամեն բան կերթայ նախկին կարգով:

Ապագայի կինը իր երեխաների դաստիարակութեամբ կը զբաղուի այն չափով, որչափով ընդունակութիւն և հակումն ցոյց կը տայ այդ բանի համար, և որչափ իր աշխատանքը կը թոյլատրէ: Բայց, այնուամենայնիւ, մանուկների դաստիարակութիւնը

հասարակական մի անհրաժեշտ ֆունկցիա է, և եթէ մայրը հրաժարուի այն կատարելուց, ստիպուած կը լինի կրել նիւթական որոշ զոհողութիւն՝ այսինքն երեխան յանձնելով պրոֆեսսիօնալ, դաստիարակի, նա պարտաւորուած է իր աշխատանքի մի մասը յատկացնելու վերջինիս:

Գուցէ կարծում էք, որ հասարակական այդպիսի կարգերի ժամանակ անհամեմատ աւելի մանուկներ կը ծնունեն: Ո՛չ: Միայն անկախութիւն չվայելող կամադուրկ ու թուլամիտ ստրկունիներն են ընդունակ ճակատագրական միօրինակութեամբ ամեն տարի աշխարհ բերելու մի նոր արարած, մինչև որ երկոտասանեակը կը լրացնեն. իսկ ապագայի ինքնագլուխ կինը ընդունակ է այդպէս անհիւ: Բացի դրանից՝ ընդհանուր բարօրութիւնը, կանանց մտաւոր զարգացումը և գլխաւորապէս խելացի միջոցների գործադրումը՝ կը նպաստեն ոչ ցանկալի յղութեան առաջն առնելու և անկասկած կը պակասեցնեն ծնունդների թիւը, կը հասցնեն ցանկալի չափերի ու կարտագրեն աւելի առողջ սերունդ: Դժուար թէ սոցիալիստական հասարակութիւնը չմտածէ գործադրել նախագիտական միջոցներ. չէ՞ որ այդ միջոցների գործադրութեան ոչ մի լուրջ արգելք չկայ բացի մի քանի չնչին նախապաշարունակներից և յիմար կեղծիքներից:



25

17

ՄԷՐԸ ԿՈՂԵԿՏԻԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԷՉ

Այժմ, քանի որ նախապատրաստական նկատողութիւններն արուած են, կարող ենք թոյլ տալ մեզ մի փոքր երեւակայութիւն: Ի՞նչ դիրք կը ստանայ և ի՞նչ ձև կընդունի սէրը ազատ կանանց և տղամարդկանց մէջ:

Սխալների և թիւրիմացութիւնների առաջն առնելու համար մի անգամ ընդմիշտ ընդունենք հետեւեալ հիմնական ենթադրութիւնը՝ թէ կոլլեկտիվիստական հասարակութիւնը այն հասարակութիւնն է, որի մէջ գոյութիւնն է տեղ չունի անառակութիւնը: Մէրը առանց քահանայի օրհնութեան ի հարկէ գոյութիւն կունենայ աւելի մեծ չափերով, բայց անառակ կանայք չեն լինի, այսինքն՝ սեռական կապակցութիւնը առանց սիրոյ, տնտեսական պահանջներից դրդուած չի կարող գոյութիւն ունենալ: Այն սովորական պատճառարանութիւնը, թէ մի քանի աղջիկներ ի բնէ խիստ զգայուն են, զժուար թէ կարելի լինի համարել բանական: Ուժեղ և բացառիկ զգայականութիւնը կարող է արտայայտուել միայն այն բանով, որ աղջիկը յաճախ կը փոխէ իր սիրելիներին. բայց, չէ՞ որ այդ բանը երբեք չի կարելի անառակութիւն համարել: Նրան ամեն անգամ զեկամարում է սէրը, հակումն ու յարգանքը: Միայն անուղղելի Ֆիլիստրների, կարճամիտ մարդկանց կարծիքով այդ աղջիկը կարող է անառակ համարուել: Արդէն յայտնի է, որ այդ մարդիկ ծուռ են նայում այն ամենի վրայ, ինչ որ պաշտօնական կնիք չէ կրում: Եթէ այդ աղջիկը չհետեւէ իր ներքին հակումներին, այլ միայն նիւթական շահն ի նկատի առնելով հրաժարուէր մարդկային ամենագեղարանց իրաւունքից—ապաւ ընտրողութեան իրաւունքից, ահա այդ ժամանակ միայն մենք պիտի համոզուէինք, որ գործ ունենք անառակ կնոջ հետ:

Այժմ կարծեմ ժամանակ է քննելու գիտնականօրէն դարձարուած մօղնի յիմարութիւնը՝ «ի բնէ անառակ կանանց մասին»: Ենթադրենք, որ մեզ ապացուցեցին, որ հարիւր անառակ կանանց մէջ Ֆիլիքսայէս ու բարոյապէս այլասեռութեանը աւելի շատ են, քան հարիւր բարոյական կանանց մէջ: Դրանից ի՞նչ էք հետեւցնում: Միայն այն, որ աղքատութեան ու զրկանքների մէջ ծնուած ու դաստիարակուած աղջիկները աւելի շուտ են ենթարկուած գայթակղութեան, քան միւսները և ուրիշ ոչինչ: Մեզ կարող են նոյնպէս մատնացոյց անել ալկօօլիկների թուլակամ աղջիկների վրայ, որոնք ոյժ չունեն դիմադրելու սեռական ձգտումներին: Միթէ դրանով որևէ բան հաստատում են: Միթէ դա ապացոյց է, որ այդ զժուար արարածները ստեղծուած են զուարճանելու այն բոլոր լոթիներին, որոնք գրպանումը փող ունեն նրանց գնելու համար: Միթէ կարելի է մի երիտասարդի մեղադրել բնածին արեւցողութեան մէջ միայն այն պատճառով, որ այդ երիտասարդը իրան չէ կարողանում դապել ու չափօգանց շատ է խմում գարեջուր, և դրա համար էլ՝ խորհուրդ տալ նրան՝ գարեջրագործ կամ գինեվաճառ գառնալու, որպէս զի կարողանայ աւելի լաւ հետեւել իր բնական հակումներին: Ամենևին ոչ: Եթէ կապիտալիստական հասարակութիւնը ընդունակ է, զուարճանալու նպատակով, օգտուել լքուած ու տանջուած արարածների հիւանդութիւնից և թուլութիւնից, սոցիալիզմը դրա հակառակ հիւանդների հետ պիտի վարուի այնպէս, ինչպէս հիւանդների հետ, ու նրանց պիտի պաշտպանի ամեն մի չարագործութիւնից:

Ուրեմն ապագայ հասարակութեան մէջ անառակ կանայք չեն լինի. չի լինի կանանց այն առանձին դասակարգը, որ ստեղծուած է բացառապէս զրկախառնութիւնների համար և շրջապատուած է արհամարհանքով: Անառակ կանանց հետ կանխեղծանայ և այն անբարոյականացնող ազդեցութիւնը, որ գործում են նրանք թէ բուրժուա թէ պրօլետար միջավայրին պատկանող տղամարդկանց վրայ: Ճշմարիտ է, բանւորները բաւարարութիւն են գտնում աւելի աժանագին կանանց մօտ, բայց դրանով հարցը չէ փոխուած: Երբ վերանայ անառակութիւնը, կը խաղաղուի այն մշտնջենական անբաւարարութիւնը, որ զգում են շարունակ տղամարդիկ, չնայած որ ծախու սէրը ողողում է աշխարհը. կը վերջանայ այն ամօթաբեր խաբէութիւնը, որ տղամարդը վատնելով իր երի-

տասարդական թարմութիւնը, ամուսնանում է մարմնով ու հոգով առողջ ազնկայ վրայ: Կինը երբէք չի ցանկանայ միանալ տհաս երիտասարդի, վատոյժ արկածախնդրի, խղիօտի*) և արբեցողի հետ: Կինը, ինչպէս այդ տեղի է ունենում բոլոր առողջ ու դէպի առաջադիմութիւն ձգտող ցեղերի մէջ, — պատուաւոր տեղ կը բռնէ և տղամարդը ստիպուած կը լինի լարել իր բոլոր ոյժերը յաղթահարելու բոլոր ախոյեաններին և տիրապետելու նրան: Չէ՞ որ այն ժամանակ տղամարդն էլ աւելի ընտրողաբար կը վերաբերուի և պահանջող կը լինի: Այդպիսով սիրային իւրաքանչիւր կապակցութիւն կը դառնայ մարմնացումն այն ստեղծագործական ոյժի, որին պարտական ենք նկարչական գեղեցկութեան ամենաազնիւ մարգարիտները, առանց որի գեղար թէ մարդը ունենար գեղեցկի զգացումը և ստեղծագործական կարողութիւնը: Այդ ոյժը — սեռական քնտրութիւնն է, բայց ոչ գոյութեան կռիւի, այլ սիրոյ կռիւի ասպարէզում:

Կարելի է յուսալ, որ այդ կապակցութիւնները, հիմնուած լինելով խոր մտածուած ընտրութեան վրայ, կը դառնան աւելի հաստատուն ու երկարատեւ. իսկ նրանց կայացնելն ու լուծելը — կը համարուի աւելի լուրջ գործ: Գեղար է, ի հարկէ, որոշակի ասել թէ հրքան կը լինի այդ տեղութիւնը: Գուցէ այդ կապակցութիւնները օրինաւոր միակնութեան, կամ ցմահ ամուսնութեան կերպարանք ստանան, կամ կարող է պատահել, որ տեղի կունենայ բոլորովին հակառակը:

Անհաւանական չէ, որ յետագայ սեռական ընտրողութեան պահանջը կենակցութեան ժամանակը աւելի կարճացնէ, քան թէ Փուրիէն էր ենթադրում, դարձնէ վեց ամիս կամ աւելի պակաս:

Ես չեմ կարող այս բոլոր հարցերին տալ որոշ պատասխաններ, և գեղար թէ որևէ մէկը կարողանայ այդ անել: Բայց ենթադրում եմ, որ թէ այդ երկու ծայրայեղութիւնները և թէ անթիւ միջանկեալ ձևեր գոյութիւն կունենան միաժամանակ և դրանք

*) Այդ առիթով Ստեֆան Գրոմմանը արեց հետեւեալ նկատողութիւնը. «Այն ժամանակ ի՞նչ պիտի անեն իրիտանները, և այն...»: Եթէ Գրոմմանը մտադիր է սրանից յետոյ էլ նոյնքան համեստօրէն շարունակել իր պարագիտներին խաղը, գեղար թէ յաղթութիւն տան: Ես խորհուրդ կը տայի ըստ կարելոյն հանդիսաւ սրտով առաջարկել հետեւեալ հարցը. «Եթէ այլևս թարմ մարդկային միա չլինի, էլ ի՞նչ պիտի անեն խեղճ մարդակերները: Ես համոզուած եմ, որ այդ խօսքերը լսելով ամբողջ Café Griensteide-ը զարմանքից կը ճարի:

բոլորն էլ նոյնքան օրինաւոր կը համարուեն կողեկտիլիստական հասարակութեան մէջ:

Մի քանի բաւական արժէքաւոր դատողութիւններ տեղիք են տալիս կարծելու, որ ապագայ ամուսնութիւնները երկարատեւ չեն լինելու:

Ամբողջ կեանքը տեղող ամուսնութեան բնական միջավայրն է պահպանողական, դարգացման կողմից անշարժ հասարակութիւնը: Չէ՞ որ միայն այնտեղ, որտեղ բոլոր մարդիկ գտնուում են միեւնոյն սովորութիւնների ճնշման տակ և միայն այն երիտասարդներն ու օրիորդները, որոնք դաստիարակուած են այդ նոյն նախապաշարունակներով, կարող են պահպանել իրանց բարոյական կերպարանքը մինչև կեանքի վերջը անփոփոխ: Բայց հէնց այժմ էլ, քաղաքակրթութեան մեծ կենտրոններում գործը բոլորովին ուրիշ ձև է ստացել: Եւ որքան ժամանակակից քաղաքակրթութիւնը առաջադիմում է, այնքան աւելի ու աւելի ենք հեռանում այդ նախնական տիպից: Մենք ներկայացուցիչներ ենք in statu nascendi — մարդկութեան, մարդկութեան՝ որի նմանը գոյութիւն չէ ունեցել Հռոմի կործանումից յետոյ. զանազան ազգութիւնների արիւնը խառնուել է և հոսում է մեր երակների մէջ. անցեալ ցեղերի սովորութիւնները հիւսուելով ու միմեանց լրացնելով՝ արտայայտուել են մեր վրականութեան մէջ. լրագրի իւրաքանչիւր համարը, ամեն մի հեռագիր բերում է մեզ անլուր տեղեկութիւններ: Ոչ մի ազգի վիճակուած չէր ապրել այդպիսի պայմաններում:

Այն ժամանակ, երբ կղզիացած ազգային ու պետական ձևերը հետզհետէ լուծւում են, առանձին տարրական ձևերը ընդհակառակը անհատականանում, ձեռք են բերում իրանց առանձնայատուկ նրբութիւնները: Այդպիսի պայմաններում այն ենթադրութիւնը, թէ իրենց դարգացման ընթացքում տղամարդն ու կինը կը հաւասարուեն ու իրենց ամբողջ կեանքում զուգընթացաբար առաջ կերթան, դառնում է հեռզհետէ աւելի ու աւելի կասկածելի: Ընդհակառակը, աւելի հաւանական է թւում, որ այն ոյժերը, որոնց շնորհիւ տղաւորդու և կնոջ կեանքի ուղիները ժամանակաւորապէս հանդիպել են, հետեւեալ ընթացքում կարող են առիթ տալ երկպառակութեան: Այդ երկպառակութիւնը կաճի և որոշ ժամանակից յետոյ այնպիսի չափեր կը ստանայ, որ բաժա-

նումը կը դարձնի անխուսափելի. ժամանակաւորապէս մտերմացած մարդիկ նորից կը հեռանան զանազան կողմեր ու կորոնեն նոր կապեր:

Տղամարդու և կնոջ սիրոյ երկարատևութիւնը կամ կարճատևութիւնը ոչ մի դեր չի խաղայնրանց հասարակական գիրքը որոշելու մէջ. այդ գիրքը կորոշուի նրանց աւելի կամ պակաս աշխատելու ընդունակութեամբ և նրանցից իւրաքանչիւրի հասարակութեան համար օգտակար հանդիսանալու չափով: Դրա պատճառն այն է, որ այն ամենը, ինչ հասարակական բնաւորութիւն է կրում, կը դառնայ հասարակութեան սեփականութիւնը ու կը կանոնաւորուի հասարակութեան կողմից. դրա համար էլ հասարակութիւնը ամենեւին չի հետաքրքրուի, թէ առանձին անհատները աշխատանքից յետոյ, ազատ ժամերին, ինչպէս են որոնուէ՝ ու գտնուէ՝ իրանց երջանկութիւնը:

Ինչ չափով որ մայրերի ու երեխաների վրայ տարուելիք հոգսը անցնի հասարակութեան, այն չափով էլ կիրականանայ բանաստեղծի հանաքով շարտած խօսքերը թէ՛ «Սէրը անհատական գործ է»:

Գոյութիւն կունենայ արդեօք նախանձը: Կարծում եմ, որ այո՛, և գուցէ աւելի մեծ չափերով: Բայց այն ժամանակ նա կը կորցնէ իր տաքարին, կուարար բնաւորութիւնը ու կըստանայ խաղաղ մրցումի կերպարանք, որ կարտայայտուի կատարելապէս պատուաւոր ու յարգանքի արժանի ձևերով: Այդ մրցման մէջ անյաջողութեան հանդիպողը խաղաղութեամբ ճանապարհ կը տայ իր հակառակորդին, խոստովանելով, որ իր անյաջողութեան գլխաւոր պատճառը իր անկատարելութիւնն է:

Բայց բազմակնութիւնն ու բազմայրութիւնը, որ ոմանց կարծիքով ազատ սիրոյ էական կէտն է, գոյութիւն կունենայ արդեօք կրկնկտիվիստական հասարակութեան մէջ: Տեղի կունենան արդեօք կենակցութեան այսպիսի դէպքեր. մի կին երկու ւղղամարդի հետ, կամ երկու օրիորդ մի տղամարդի հետ:

Ես խորապէս համոզուած եմ, որ այդպիսի անբնական երեւոյթներ կոլլեկտիվիստական հասարակութեան մէջ խիստ սակաւ կը պատահեն, աւելի սակաւ, քան այժմ: Երբ այդպիսի դէպքեր յաճախ են պատահում՝ երբէք ազատ սիրոյ արդիւնք չեն լինում: Դրանք աւելի շուտ արդիւնք են ազատ չլինելու. օրի-

նակ, կնոջ անհաւատարմութիւնը գլխաւորապէս բացատրուած է այն տնտեսական կախումով, որ ունի այդ կինը դէպի իրան ատելի ամուսինը, կամ թէ այդ շեղումները հետեանք են լինում հասարակական պարզիտիզմի, մակարութեան. օրինակ, հաշուատ թիւքերի հարէմները. յայտնի է, որ բազմակնութեան աղքատութիւնքեր ունին մի-մի կին, չնայած որ նրանց օրէնքը թոյլատրուած է պահել աւելին:

Մի շատ հետաքրքիր օրինակ կայ մորմոնների բազմակնութեան մասին, որ աւելի հաստատում, քան թէ ժխտում է իմ կարծիքը: Նրանց աննշան մասը միայն (մօտ 6 %), օգտուելով եկեղեցական թոյլատրութեամբ՝ բազմակնութիւն է ընդունում: Աւանց ուշադրութեան արժեք ունի այն համակրանքը, որ ունենք մենք դէպի Ուտայի (Utah) կիսասոցիալիստական հաստատութիւնները, պէտք է լաւ պարզենք այն հարցը, թէ այդ 6 %-ի մէջ մտնում են արդեօք արտօնուած դասակարգերը, քուրմերը, վարչական պաշտօնեաները, և այլն: Մանաւանդ որ, Ուտայի բազմակնութիւնը մի սրբազրութիւն է, որ մտցրել է կեանքը եկեղեցու հաստատած պսակի անլուծելիութեան պատճառով: Ենթադրենք, որ մորմոնների եկեղեցին մի գեղեցիկ օր ապահարզան թոյլատրեց, դրա հետեանքը այն կը լինի, որ բազմակնութիւնը հետզհետէ կը փոխուի միակնութեան:

Եթէ սոցիալիստական հասարակութեան մէջ լինեն անհատներ, որ չնայած իրանց տնտեսական կատարեալ անկախութեանը կը կամենան բազմակնութեան, կամ բազմայրութեան մէջ մտնել՝ այդ իրենց մասնաւոր անհատական գործը կը լինի, և ոչ ոքի չի վերաբերի:

Այդպիսի բազմադիմի կենակցութիւնները ոչ մի կերպով չեն ֆլասի հասարակաց շահերին. նրանք կը լինեն հազուադիւստ անհատների կենսական ոյժի օրինական ու բացառիկ արտայայտութիւնները:

Ուստի դրանց դէմ ոստիկանական ճնշումներ գործ դնելու ոչ իրաւունք ունենք և ոչ հիմք:



V

ԲԱՐԵՆՈՐՈԳԻՉ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Վերադառնանք իրականութեան:

Մեզ մօտ առայժմ կոլլեկտիվիզմը չէ տիրապետում. կնոջ աշխատանքը վատ է վարձատրւում. մօր ու երեխայի հասարակական հոգատարութեան փոխարէն գոյութիւն ունի նրա միայն ամենաթոյլ ստուերը. անառակութիւնը ծագկած դրութեան մէջ է. ինչ պիտի անել:

Պիտի գտնել ընդդիմադրութեան ամենաթոյլ կէտը, որի ուղղութեամբ և կարելի է անընդհատ առաջ գնալ. չէ՞ որ մենք ձգտում ենք ոչ յետադիմութեան, այլ առաջադիմութեան: Միլենոյն ժամանակ չպիտի մոռանանք, որ առանձին անհատներին օժանդակելը և նրանց համար ժողովրդի հաշուով մեծ կամ փոքր պարագիտական «ազատութիւն» ստեղծելը մեր գործը չէ. մենք պիտի ոտի կանգնեցնենք ու ազատենք ամբողջ ժողովուրդը:

Այդ տեսակէտից սեռական ստրկութեան դէմ կուր լուրջ միջոց չի կարելի համարել այն անճատական բռնկումներն ու բողոքները, որ այնքան յաճախ պատահում են վէպերի և երբեքն էլ կեանքի մէջ: Վերջնէնք հէնց Մակայի (Makay) հետաքրքիր նորավէպը: Հարուստ Ֆրանց Գրաքը ու կարողութեան տէր Դորա Սիքը միմեանց խօսք տալով, որ իրանց յարաբերութիւնների մէջ ոչ մի ճնշման ու կախումի դէպք չպիտի տեղի ունենայ, առաջին կարգի կուպէտով ուղևորւում են Պարիզ...

Անկասկած այս ամենը շատ դուրեկան է նովելայի հերոսների համար, գուցէ նրանց օրինակն էլ բաւական խրատական լինի որևէ զոյգի համար, որ ապրում է ապահովուած դրութեան մէջ. բայց ժողովրդի լայն խաւերին, որոնք իրանց վրայ կրում են թէ

տնտեսական և թէ սեռական ստրկացման կրկնակի լուծը, հրաւիրել հետեւելու Ֆրանցի և Դորայի օրինակին, — կը նշանակէ կամ ժողովուրդը ծաղրել, և կամ ցոյց տալ կատարեալ անհասկացողութիւն:

Սրա դէմ կարող են առարկել թէ, եթէ գլխաւորը տնտեսական անկախութիւնն է, աշխատելով զօւլար չէ հասնել նրան:

Դժբաղդարար այդպիսի հրաշքներ շատ յաճախ կատարւում են գրականութեան մէջ, բայց կեանքում այդպիսի երևոյթները չափազանց սակաւթիւ են: Մենք կարող ենք հրճուել, որ մեր հեղինակները ստեղծել են մարանչոզ-կանանց այնպիսի հրաշալի տիպեր, ինչպէս օրինակ, Գորտլերենի Րիտա Բեվերան—կամ Վոյցոյենի Լիլի-Ֆոն-Րոբրեկեր: Բայց միթէ հազար երգչուհիներից կը լինի մէկը, որ ունենայ այնչափ աստղանդ, եռանդ ու բաղք, որ կատարելապէս պահպանուելով՝ համաի այնպիսի փառքի, որին հասաւ Րիտա Բեվերան. նոյնպէս կասկածելի է, որ կանացի հագուստներ և այլն կարող գերձակ-կանանց մէջ գտնուի մէկը, որ այնպիսի յաջողութիւն ունենայ, ինչպէս գեղեցիկ Բոբրեկերը: Բանաստեղծը նրան օժտել է ընտելեան բոլոր պարգևներով. շքեղ ճաշակով, հրաշալի արտաքինով, հոգատար ու զգայուն բարեկամներով և մի կլորիկ կարողութեամբ:

Եթէ հրճուանքով հանդիպում ենք կանանց այդպիսի տիպեր գրականութեան ու կեանքի մէջ (ի հարկէ կեանքի մէջ նրանք մեզ համար աւելի գնահատելի են), ուստի ևս առաւել անհրաժեշտ է կարելիին չափ ճշտութեամբ որոշել, թէ, զոր աստիճան այդպիսի բնաւորութիւնները բացառիկ են: Ժողովրդի մասսայի համար պիտի բանալ մի այլ ճանապարհ:

Այդ ճանապարհի մասին ես երկրորդ գլխում արդէն խօսել եմ: Նախ և առաջ մենք պիտի կուենք օրինաւոր և ապօրինի դաւանների իրաւունքների հաւասարացման համար, իսկ այնուհետև պիտի ընդարձակենք, ձեւափոխենք և վերանորոգենք հասարակական այն հաստատութիւնները, որոնց միջոցով կարելի կը լինի անպսակ ամուսնութիւնը ողբերգութիւնից ու աղէտից դարձնել կենսական սովորական երևոյթ: Բայց նախ և առաջ անհրաժեշտ է բարձրել կանացի աշխատանքը. այստեղ հարցն այն չէ, թէ կանանց պիտի տրուի աշխատանք, այլ այն՝ որ այդ աշխատանքը նրանց ոյժից վեր չլինի, ու տրուած լինի յարմար


պայմաններն մէջ: Այդ ուղղութեամբ մի քանի բան կարելի է կատարել արհեստակցական հաստատութիւնների միջոցով, բայց գլխաւորապէս — օրէնսդրական ճանապարհով: Ի հարկէ այս բարենորոգիչ աշխատութիւնը զգալի չափով կը թեթեւանայ, եթէ ջանիլ աղջիկները ստանան լաւ դպրոցական ու արհեստական զարգացում, և աւելի լաւ նախապատրաստուած լինեն արդիւնաբերական աշխատանքի համար: Այդ ուսումը պիտի մատչելի լինի նոյնիսկ ամենաաղքատ ծնողների զաւակների համար. ուստի մենք պիտի կուենք ոչ միայն ձրի ուսումի, այլև ձրի ուսման պիտոյքների, և աշակերտութիւնների ձրի ապրուստի համար: Երբ կը հասնենք մեր ճանապարհի այս առաջին հանգրուաններին, կանգ չենք առնի, այլ կը շարունակենք կռիւը մինչև որ կիրառործութի կոլլեկտիվիստական կազմը: Այն ժամանակ ներկայ ամուսնութիւնը կը դառնայ ոչ ոքի համար նշանակութիւն չունեցող մի հաստատութիւն ու հետզհետէ ինքն իրան կ'օժնանայ:

Բայց, քանի որ դեռ գոյութիւն ունի ամուսնութիւնը, պիտի ջանանք նրան աւելի տանելի դարձնել. պիտի աշխատենք գիւրացնել ապահարգանք: Մեծ հեռանքների կը հասնէինք, եթէ Գերմանիայում, Փրանսիայում, Աւստրիայում և Անգլիայում էլ ամուսնութիւնը նոյնպէս հեշտութեամբ լուծուէր, ինչպէս Շվեյցարիայում: Ամերիկան մեր բոլորիցս այնքան առաջ է անցել, որ նրա մասին խօսելն անգամ աւելորդ է. եւրոպական ամենօրեայ մամուլը իզուր է ծաղրում նրա ամուսնական բարձր ու յառաջադէմ օրէնքները: Որքան հեշտ լինի ամուսնալուծութիւնը, արհաւիր շատ կը լինի սիրոյ վրայ հիմնուած ամուսնութիւնների թիւը: Իսկ այդ տեսակ ամուսնութիւնը արդէն իր էութեամբ նմանում է ազատ սէրին, մանաւանդ, երբ զգալի չափով պահաս լինի կնոջ տնտեսական կախումը տղամարդուց: Որքան շուտ ընտելանայ հասարակաց կարծիքը ամուսնալուծութեան և համարի նրան մի բնական երևոյթ, նոյնքան շուտով ժողովրդի խաւերը իրանց մտքերն ու զգացումները կը փոխեն յօգուտ ազատ սիրոյ:

Շարունակ հանդիպում ենք այնպիսի մարդկանց, որոնք ոչ ուզում են և ոչ էլ կարողանում են սպասել լաւագոյն ապագային. այդ անհատների ընդհարումը տիրապետող նախապաշարութիւնների հետ հայթայթում է մեզ գեղեցիկ նիւթ ազատ սիրոյ գաղափարները

տարածելու համար. և որպէսզի տանք նրա շօշափելի օրինակը, հարկ չկայ զբաղուելու արուեստական իրողութիւնների մշակումով: Գնալ գիւղ և գիւղացիներին քարոզիլ ազատ սիրոյ սկզբունքները, թէ՛ «դուք մի ամուսնանանք, գիւղական աղջիկների վրայ, այլ ապրեցէք ազատ սիրով» — ի հարկէ ծայրայեղ անմտութիւն կը լինէր: Գիւղացի երիտասարդը երևի ազատ սէրը կը մտնէր այն մտքով, թէ կարող է բաղդի կամքին թողնել այն աղջկան, որի հետ ինքը կապուել է: Առանց այդ էլ գիւղում միշտ կը գտնուեն մի քանի «ընկած» աղջիկներ: Եւ եթէ գիւղի ամբողջ ազգաբնակչութիւնը քահանայից մինչև վերջին հովիւը՝ սկսէ կոպտաբար ծաղրել և ցեխ նետել այդ դժբաղդների գլխին, այն ժամանակ անա մեր, սոցիալիստների համար կը գայ յարմար րոպէն, երբ գործով պիտի ցոյց տանք, որ այդ այգանուած աղջիկը մեր աչքում չէ կարցըրել իր պատիւը, և արժանի է յարգանքի. մենք նրան կը տանք այն օգնութիւնը, որին նա կարօտում է թէ իբրև մայր, թէ իբրև կին, և թէ իբրև քանուոր, որ գործ է որոնում: Քաղաքներում միշտ հանդիպում ենք այնպիսիների, որոնք միասին ապրում են, բայց այս ինչ կամ այն ինչ պատճառով ամուսնացած չեն. պատահում ենք այնպիսի կանանց, որոնք թէև ապրում են տնտեսական ծանր պայմաններում, բայց համարձակ տանում են ազատ սիրոյ մարտը և չեն ցանկանում կապուել ամուսնութեամբ, բայց միևնոյն ժամանակ ոչ մի բանով չեն նմանում հասարակաց կնոջ: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ սոցիալիստը դէպի այդպիսի կանանց վերաբերում է նոյնպիսի յարգանքով, ինչպէս վերաբերում է բուրժուան դէպի «պատուաւոր» օրիորդներն ու «օրինաւոր» կիները: Մեզ համար ամօթ կը լինէր բաղդի բերմունքին թողնել այնպիսի անհատներին, որոնք կը ունենան առաջին շարքերում, գնդակները տեղում են կարկուտի նման:

Բայց այս բոլոր, երբեմն նոյնիսկ հերոսական, օրինակները — ոչ այլ ինչ են, եթէ ոչ մի-մի դիպուած. ազատ սիրոյ կռիւ գըլխաւոր կենտրոնը լինելու է հասարակութեան մասսայական կռիւը ընդդէմ հասարակական մասսայական անարդարութիւնների. անարդարութիւններ՝ որոնց հիմնական պատճառը տնտեսական յարաբերութիւններն են: Այս կռիւը կը վերջանայ միայն այն ժամանակ, երբ մի շարք տնտեսական բարեփոխումների միջոցով



ጸብላጊነት

- I. Սոցիալիզմը և ամուսնութիւնը.
- II. Ամուսնութեան սոցիալիզացիայի հետքերը
- III. Կոլեկտիւիստական հասարակութիւնը
- IV. Սէրը կոլեկտիւիստական հասարակութեան մէջ
- V. Բարենորոգիչ աշխատանքը

ՀԱՅԿԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Մեծ

Հայկազ Մանուկյան
Կոնստանդնուպոլիս
1897 թ.

Հայկազ Մանուկյան
Կոնստանդնուպոլիս
1897 թ.

Հայկազ Մանուկյան
Կոնստանդնուպոլիս
1897 թ.

Հայկազ Մանուկյան
Կոնստանդնուպոլիս
1897 թ.

Հայկազ Մանուկյան
Կոնստանդնուպոլիս
1897 թ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0185708

Սեպ մօտ զանոսմ է հետեւեալ զրբերի

Պ Ա Հ Ե Ս Տ Ը

- 1) 26 Տղամարդ եւ 1 աղջիկ, վէպիկ Գօրկիյի, թ. Մուշէ վարդ. 5 կ.
- 2) Կեանքի Դաւր, պատմաժք Ա. Ահարոնեանի, 2-րդ տպւ. 5 »
- 3) Սպիտակ Ծաղիկ, Նովէլլա էլ. Օժէշկօի, թ. Ս. Շահվեր. 5 »
- 4) Արտիստը, վէպիկ Շիրվանզադէի 15 »
- 5) Եագօնիա, (հասարակ տեսութիւն), Խ. Խաչատրեանի 3 »
- 6) Դանկօյի Սիր որ, Գօրկիյի, թարգ. Ա. Աթայեանի . . . 3 »
- 7) Իմ Ուղեկիցը, Գօրկիյի, թարգ. Ա. Աթայեանի . . . 10 »
- 8) Մեծ փականք և առլաժի մանր, Վ. Փափազեանի . . . 4 »
- 9) Պայտառի նոցին և անկեղծ բնծալ, Վ. Փափազեանի 5 »
- 10) Խեթր արարողներ եւ զրախտը, Վ. Փափազեանի . . . 5 »
- 11) Սիրոյ նովիտը, Ա. Աթայեանի 3 »
- 12) Վիշապ և ուրիշ զրոյցներ, Վ. Փափազեանի 5 »
- 13) Երազ, (Պատկեր Բալխանու կեանքից) Մ. Եսայեանի 3 »
- 14) Երկու բաջուն, Վ. Փափազեանի 3 »
- 15) Մեկ բոբլի, (Պատկ. Բալխանու կեանքից) Մ. Եսայեանի 3 »
- 16) Յիսուսի կեանքը, է. Ռընանի, թարգ. Վ. Վ. 1 ը.
- 17) Ժամբոտ վերքեր, Նշտարի 15 »
- 18) Սևական կեանք, I մաս, Նշտարի 20 »
- 19) Աստարնադոն և երեք հարց, Լ. Տալստօյի 5 »
- 20) Մայրը (Վ. Հիւզօյի) և ուրիշ զրոյցներ 7 »
- 21) Որոմն ցանողներ, Կօմ. Յ. զօրծ. Վ. Տիրացեանի . . . 30 »
- 22) Ծիծաղաբեր, անկկգօտներ, Խ. Խաչատրեանի . . . 20 »

Պահետատեղից կիրք պահանջողներին թիֆլիսում՝ 20—30 ր/₁₀₀ զեղջ, իսկ զուրը՝ 20 ր/₁₀₀, ճանապարհածախար մեր հաշիւն: Պահետար զանաւոր է Վ. Վարդանեանի մօտ, Գանօսկայա, Յ. Պահանջները ուղղել Գ. Բարուրեանին՝ Тифлисъ, Дворцовая, Фабричи. магазинъ Н. Бозарджиянцъ съ Сми, телефонъ № 181.